«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում քննադատական մտածողության զարգացումը համագործակցային մեթոդի միջոցով

ԱՌԱՐԿԱ - **Հասարակագիտություն**

ՀԵՂԻՆԱԿ - Աննա Թադևոսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - Սևանի N6 միջն. դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն ---------- 3

2. Քննադատական տածողության տեխնոլոգիան ---------- 4

3. Քննադատական մտածողության զարգացումը

համագործակցության մեթոդի միջոցով ---------- 6

4. Եզրակացություն ---------- 14

5. Օգտագործված գրականության ցանկ ----------15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով : Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը : Հասարակական բոլոր փոփոխությունները անդրադառնում են նաև կրթական համակարգին: Յուրաքանչյուր պետության համար կրթության բնագավառը հանդիսանում է պետության զարգացման գործում ռազմավարական նշանակություն և կարևորություն ունեցող ոլորտ : Հայաստանի Հանրապետությունը լինելով դեռևս զարգացող ժողովրդավարական պետություն, այսօր ունի ժողովրդավարական արժեքներին դավանող հասարակություն կերտելու հրամայական : Այս նպատակի իրականացման համար թերևս միակ ճանապարհն անցնում է կրթական համակարգով : Կրթության գլխավոր նպատակը բանիմաց հասարակության ձևավորումն է, որտեղ կլինեն հմտություններ և կարողություններ ունեցող անհատներ, որոնք կկարողանան վերափոխել և զարգացնել իրենց իմացական ընկալումը: Անհատի իմացական ընկալումները վերափոխելու ամենաարդյունավետ մեթոդներից մեկը ինքնուրույն քննադատական մտածողության զարգացումն է: Ռոբերտ Էննիսը , ով հանդիսանում է քննադատական մտածողության առաջատար մասնագետներից մեկը , քննադատական մտածողությունը սահանում է , որպես ՝ ողջամիտ և ռեֆլեկտիվ մտածողություն , որը միտված է որոշելու ինչին հավատալ կամ ինչ անել ’(Ennis 1989): Նա նշում է , որ քննադատաբար մտածելու նպատակն է գտնել ճշարտությունը կամ ճշմարտությանն ամենամոտ գտնվող պատասխանը: Սակայն սա ամենևին չի նշանակում , որ խնդրի շուրջ քննադատական մտածելու արդյունքում կբացահայտվի ճշմարիտը , քանի որ այն մեծապես կախված է մտածողի նախապաշարմունքներից և հմտություններից : Հասարաագիտություն առարկան զարգացնում է աշակերտների մտահորիզոնը և էլ ավելի է նպաստում նրանց մոտ քննադատական մտածողության զարգացմանը:

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

Քննադատական մտածողությունը դա դիտարկման, փորձի , դատողության , պատճառաբանության և հաղորդակցության միջոցով հավաքած ինֆորմացիան ակտիվորեն և հմտորեն համակարգելու, կիրառելու, վերլուծելու, սինթեզելու և գնահատելու մտավոր գործընթաց է :

Քննադատական մտածողության ամենավաղ դիտարկումները հանդիպում են Սոկրատեսի ուսմունքներում , որոնք արձանագրվել են Պլատոնի կողմից : Նա կարևորում էր խորը հարցադրումների կատարումը , որոնք հետազոտողը պետք է իրականացնի նախքան վերջնական եզրահանգումները:

Փիլիսոփայական տեսանկյունից քննադատական մտածողությունը դիտարկվում է որպես տրամաբանական , ռեֆլեկտիվ , ստեղծագործական մտածողության յուրահատուկ ձև : Քննադատական կամ ռեֆլեկտիվ մտածողությունը ծագում է խնդրի ընկալումից : Դա մտքի որակ է , որը գործում է՝ փորձելով լուծել խնդիրը և գալ նախնական եզրակացության , որը հաստատվում է առկա բոլոր տվյալներով : Իսկապես դա խնդիրների լուծման գործընթաց է , որը պահանջում է ստեղծագործական խորաթափանցություն , ինտելեկտուալ ազնվություն , և լավ դատողություն : Դա հետազոտական մեթոդի հիմքն է: Քննադատական մտածողությունը ենթադրում է ազնվություն, այն իմաստով, որ մենք չպետք է հուզականորեն կողմնորոշվենք որևէ իրավիճակի նկատմամբ: Փոխարենը նման պահերին մենք պետք է մտածենք առանց նախապաշարմունքների և նաղքան վերլուծելը պետք է հաշվի առնենք իրավիճակի վերաբերյալ բոլոր հնարավոր հետևանքները, որն էլ կօգնի արդյունավետորեն լուծել խնդիրները:

Քննադատական մտածողության զարգացման հարցերը տրամաբանականորեն կապված են անձի ստեղծագործական գործունեության, ինքնիրացնան , ինքնուրույնության հետ: Այն բնութագրվում է որպես ճանաչողական գործընթաց, որը վերաբերվում է փորձի արդյունքում ստացված տեղեկատվական վերլուծությանը , համադրմանն ու գնահատմանը , դիտումների, խորհրդածությունների կամ հաղորդակցման միջոցով :

Անձի քննադատական մտածողության ձևավորումը կապված է նրա ընդունակություններից , հետաքրքրություններից , կարևոր են նաև ուսումնական նյութի բովանդակությունն ու կիրառվող մանակավարժական տեղնոլոգիաները:

Քննադատական մտածողությունն ունի երկու բաղկացուցիչ մաս. բաղկացուցիչներից մեկը ենթադրում է ինֆորմացիան և համոզմունքները գեներացնելու և վերամշակելու հմտությունների ամբողջությունը, իսկ երկրորդը՝ այդ հմտություններն օգտագործելու սովորույթն է, որի արդյունքում ձևավորվում է սեփական վարքագիծն ուղղորդելու հիմքը: Մեր օրերում հաճախ է շեշտվում այն ընդհանուր մոտեցումը, որ կրթության նպատակը միայն գիտելիքի տրամադրումը չէ, այն նաև պետք է ձևավորի սերունդ, որն ունի ինքնուրույնություն քնադատաբար մտածելու ինչպես ուսուցանվող գիտելիքների, այնպես էլ իրական կյանքում գոյություն ունեցող խնդիրների շուրջ: Քննադատական մտածողությանը նպաստող հմտությունների զարգացումը կարևորվում է ժողովրդավարական հասարակության ձևավորման և ժողովրդավարական արժեքների պահպանման տեսանկյունից: Այն հասարակությունը, որն ունակ է մտածելու, խնդիրը բազմակողմանիորեն վերլուծելու, հանդիսանում է պետության զարգացման հիմնական շարժիչ ուժը:

Քննադատական մտածողությունը միասնական սահմանում չունի: Հայերենում այն ենթադրում է պարտադիր քնադատություն և անհամաձայնություն խնդրո առարկայի շուրջ, մինչդեռ նրա անգլերեն արտահայտությունը առավել ընդգրկուն է և ենթադրում է քննողական մոտեցում, այսինքն, խնդրո առարկայի բազմակողմանի քննարկում:

Ըստ Ռոբերտ Յանգի քննադատական մտածողությունը նպատակասլաց, պարտճառաբանված, նպատակի իրագործմանն ուղղված մտածողություն է: Քննադատական մտածողությունը ենթադրում է իմացական հմտությունների և ռազմավարության կիրառում, որը կմեծացնի ցանկալի արդյունքին հասնելու հավանականությունը:

Սալի Գլենը նշում է, որ նախքան որոշում ընդունելն անհրաժեշտ է գնահատել այդ որոշման ճիշտ կամ սխալ լինելը և հնարավոր ազդեցությունը: Ըստ Գլենի քննադատական մտածողությունը դա փիլիսոփայական կողմնորոշում է դեպի մտածողություն, որին հատուկ է պատճառաբանված դատողությունը և ռեֆեկտիվ մտածողությունը:

Երբ ուսումնասիրում ենք քննադատական մտածողության ձևավորան և զարգացման համար գրականությունում գոյություն ունեցող մոդելները, ակնհայտ է դառնում, որ բոլոր այդ մոդելները շատ կամ քիչ չափով հիմնված են դեռևս

1956 թ. ականավոր գիտնական Բենջամին Բլումի կողմից մշակված տաքսոնոմիայի վրա : Բլումի տաքսոնոմիայի ճանաչողական կամ իմացական խումբը բաղկացած է վեց մակարդակներից՝

- Գիտելիք
- Ընկալում
- Կիրառում
- Վերլուծություն
- Սինթեզ
- Գնահատում

Ռոբերտ Էննիսը, ում մասին արդեն խոսել ենք, իր՝ 'Քննադատական մտածողության գնահատումը' հոդվածում նշում է, որ քննադատաբար մտածելու ժամանակ անհատը, որպես կանոն, իրականացնում է հետևյան քայլերը. գնահատում է ինֆորմացիայի աղբյուրի հավաստիությունը, վեր է հանում եզրակացությունները, պատճառները և ենթադրությունները, գնահատում է փաստարկի որակը՝ հաշվի առնելով ներկայազված հիմնավորումները, ենթադրություններն ու վկայությունները; մշակում և պաշտպանում է խնդրի նկատմամբ սեփական դիրքորոշումը; հարցերի միջոցով հստակեցնում է խնդիրը; փորձարկում է սեփական դիրքորոշումը; եթե անհրաժեշտ է, սահմանում է համապատասխան եզրույթները; լինում է լայնամիտ և տեղեկացված, ինչպես նաև, երբ արդեն վստահ է իր տեսակետի մեջ, զգուշավորությամբ, բայց կատարում եզրահանգումներ (Ennis, 1993): Էննիսի մատնանշած վերոնշյալ քայլերը կարող են ծառայել ամենատարբեր նպատակներին, այդ թվում կարող են հիմք հանդիսանալ քննադատական մտածողությունը չափող թեստ կազմելու, ուսումնական պլան կամ քննադատական մտածողություն զարգացնող հատուկ առարկա մշակելու, և այլ նպատակներով:

Այսպիսով քննադատական մտածողությունը՝ դա դիտարկման, փորձի, դատողության, պատճառաբանության և/կամ հաղորդակցության միջոցով հավաքած ինֆորմացիան ակտիվորեն և հմտորեն համակարգելու, կիրառելու, վերլուծելու, սինթեզելու և գնահատելու մտավոր գործընթաց է:

Քննադատաբար մտածելու կարողություն – Քննադատաբար մտածելու կարողությունը դա խնդիրները և ենթադրությունները վերհանելու, կարևոր

հարաբերակցությունները ճանաչելու, ճիշտ եզրակացություններ անելու, փաստերը գնահատելու և եզրահանգումներ կատարելու հմտությունն է:

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻ ՄԻՋՈՑՈՎ

ՈՒսուցչի դերը քննադատական մտածողության զարգացման գործում

Քննադատական մտածողության ձևավորմանը միանշանակ նպաստում է դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը : Հասարակագիտության ժամերին համագործակցային մեթոդի ժամանակ աշակերտները ակտիվորեն մասնակցում են ուսումնական գործընթացին : Աշակերտն սկսում է մտածել խնդրի շուրջ , լսում է ոչ միայն ուսուցչին , այլ նաև համադասարանցիների կարծիքը և տալիս է իր պատճառաբանված համաձայնությունը կամ անհամաձայնությունը արտահայտված կարծիքների վերաբերյալ , ինչպես նաև կարող է ներկաըացնել ամբողջովին տարբերվող տեսակետ , որը նույնպես պետք է պատճառաբանված լինի : Աշակերտը պետք է լավ ծանոթ լինի թեմային և համագործակցի իր խմբակիցների հետ, լսի յուրաքանչյուրի կարծիքը, հակառակ դեպքում սխալ կլինի ակնկալել նրանից նման նտածողության դրսևորում:

Խիստ կարևոր է ուսուցչի դերը քննադատական մտածողության զարգացման գործում :ՈՒսուցիչը պարտավոր է քննարկումների միջոցով աշակերտին դրդել վիճարկելու տարբեր գաղափարներ , ենթադրություններ , տեսություններ , նորմեր և կանոններ , քանի որ քննադատական մտածողությունը սովորողից պահանջում է ստանձնել հասարակագիտական գաղափարներ ու խնդիրներ քննելու և հետևություններ անելու պատասխանատվություն:ՈՒսուցչի հիմնական դերը կայանում է քննադատաբար մտածողի օրինակ ծառայեու մեջ: Այսինքն՝ դասավանդողն առաջինն ինքը պետք է պատրաստ լինի վիճարկելու սեփական արժեքներն ու գաղափարները և դրանով իսկ օրինակ ծառայի իր աշակերտների առջև:

ՈՒսուցչի վարպետության ցուցանիշներից մեկն այն է, որ նա կարողանա կողմնորոշվել, թե հասարակագիտության որ թեմաների ժամանակ կարելի է ընտրել համագործակցային մեթոդը, որի ժամանակ այն կտա ավելի մեծ արդյունք:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել և լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է կիրառվում որպես դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն: Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Այն հնարավորություն է ընձեռում բազմաբնույթ կրթական նպատակներին հասնելու համար: : Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը , այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ, որն էլ կբերի յուրաքանչյուր աշակերտի մեջ քննադատական մտածողության ձևավորմանը:

Համագործակցային ուսուցման իմաստն է՝

- Անհատին դարձնել ակտիվ ու համագործակցող,
- Աշակերտների մեջ ձևավորել կարծիքները լսելու կարողություն և քննադատական մտածողություն
- Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ

Այս մեթոդն ավելի արդյունավետ է լինում , երբ աշխատանքը կատարվում է փոքր խմբերով : Այն էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում :Փոքր խմբերով ուսուցումն ունի հետևյալ նպատակները.

- Զարգացնում է խնդիրներ լուծելու կարողությունը
- Ձևավորում է հաղորդակցության հմտություններ
- Աշակերտները սովորում են միմյանց
- Զարգանում է աշկերտի պատասխանատվության զգացումը
- Միիմյանց հաշվետու լինեու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունը ապահովելու հարցում
- Խթանում է թիմային աշխատանքը
- Ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար
- Քննարկումների միջոցով ամրապնդվում է աշակերտի հաոզմունքները
- Ձևավորվում է քննադատական մտածողություն

- Ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն

Խմբային աշխատանքները և թեմայի յուրացմանն ուղղված համատեղ գործողությունները զգալիորեն ավելի լավ են անդրադառնում աշակերտի մոտ քննադատական մտածողության զարգացմանը: Փաստորեն հետազոտություն-ները ցույց են տվել, որ սովորելու համագործակցային մեթոդը աշակերտնե-րին առավել լայն հնարավորություն է տալիս գաղափարները վերլուծելու, սինթեզելու և գնահատելու:

Հասարակագիտության ուսուցման գործընթացում խմբային աշխատանքն ապահովում է առողջ քննադատություն, հանդուրժողականություն, պատասխանատվություն խմբային և անհատական հարաբերությունների դաշտում և բարյացակամ վերաբերմունք միմյանց նկատմամբ: Այս մեթոդը ձևավորում է տեղեկույթի յուրացման արդյունավետ ընթացք, փոխադարձ վստահության մթնոլորտ, սովորողները չեն վախենում սխալ մտքեր արտահայտել: Բարձրանում է սովորողների դրական մոտիվացիան, ինչը խթանում է նրանց որոնողական ակտիվությունը, ձևավորում է այլընտրանքային մտածողություն, սովորողներն սկսում են իրենց տեսանկյունից դիտարկել քննարկվող խնդիրը, իրավիճակը և լուծման եղանակները, հիմնավորում են իրենց մոտեցումները, ապացուցում իրենց համոզմունքները: Սովորում են լսել դիմացինին, հաշվի առնել նրա կարծիքը, համագործակցել, հանդուրժողական և բարյացակամ վերաբերմունք ցուցաբերել ընդդիմախոսի նկատմամբ:

Հասարակագիտության ուսուցման գործընթացում այս մեթոդը կիրառելիս պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները՝ ինչպիսիք են.

- Թեմայի ուսուցման նպատակները, խնդիրներն ու բովանդակությունը,
- Ուսումնական նյութի ծավալն ու բարդությունը
- Սովորողների պատրաստվածության մակարդակը
- Փորձի առկայությունը
- Սովորողների տարիքը
- Սովորողների թվաքանակը
- Ծանրաբեռնվածությունն ու դիմացկունությունը
- Ուսուցման նյութատեխնիական ու կազմակերպման պայմանները:

ՈՒսուցման այս մեթոդը խթանում է սովորողների ճանաչողական ակտիվությունը: Փոխազդելով միմյանց վրա՝ աշակերտները տեղեկություն են փոխանակում, համատեղ լուծում են խնդիրներ, մոդելավորում են իրավիճակներ, գնահատում իրենց կատարած աշխատանքը, սեփական վարքագիծը, այսինքն՝ տիրում է համագործակցային մթնոլորտ: Աշխատանքի նկատմամբ նման մոտեցումը բարձրացնում է սովորողների ինքնագնահատականը, վստահությունը սեփական մտավոր ունակությունների նկատմամբ, ինչը ուսուցման գործընթացը դարձնում է աշակերտակենտրոն և առավել արդյունավետ: Այսինքն՝ ուսուցման այս մեթոդը նպաստում է դասավանդող - սովորող, սովորող – սովորող հարաբերություններում համագործակցային կարողությունների զարգացմանը, միջանձնային հարաբերությունների ձևավորմանը, ինքնազարգացմանը, ուսուցան գործընթացում ակտիվ ներգրավմանը, ինքնաճանաչմանը ու ինքնավերլուծությանը:

ՈՒսուցչի ուշադրության կենտրոնում պետք է լինի ոչ թե աշակերտի ճիշտ պատասխանը, այլ այդ պատասխանին հասնելու ճանապահը, ձևը: Սովորողների սխալներն ու բացթողումները վերլուծելով, ուսուցիչը դրանք պետք է օգտագործի նրանց մոտ տրամաբանական և քնադատական մտածողություն ձևավորելու գործընթացում:

Հասարակագիտության ուսուցման գործընթացում այս ինտերակտիվ ուսուցման մեթոդի էությունն այն է, որ յուրաքանչյուր սովորող ընդգրկվում է ուսումնառության մեջ, յուրաքանչյուրն իր անհատական ներդրում է ունենում գիտելիքների ու մտքերի փողանակման գործընթացում, որը թույլ է տալիս ոչ միայն նոր գիտելիքներ ստանալ, այլև զարգացնում է իմացական գործունեությունը: Եվ ամենակարևորն այն է, որ այն բացառում է որևէ մեկի առաջնայնություն ու գերակայությունը, որևէ մեկի տեսակետի գերազանցությունը մյուսների նկատմամբ: Եվ հենց այդպիսի ուսուցումն էլ սովորողների մոտ զարգացնում է քննադատական մտածողություն, տեղեկատվական վերլուծության հիման վրա հիմանխնդիրներ լուծելու, այլնտրանքային տեսակետներ քննարկելու, կշռադատված որոշումներ ընդունելու և բանավեճերին մասնակցելու կարողություն է այլն:

Ինչքան մեծ է ինֆորմացիան, որի հետ աշակերտն աշխատում է, այնքան կարևոր է կարողանալ առանձնացնել գլխավորն ու երկրորդականը: Այս առումով կարևոր է հարցադրումներ անելը, որոնք թույլ կտան առանց որևէ սահմանապակման արտահայտել սեփական տեսակետը, առանձնացնել ամենաէականը, բացահայտել առկա հակասությունները, երևույթներն ու փաստերը դիտարկել լրիվ այլ տեսանկյունից: Հարցը մի կողմից բնորոշում է այն, ինչ արդեն իսկ գիտենք, իսկ մյուս կողմից կա որոշ չիմացություն, այսինքն՝ այն, ինչ չգիտենք և ուզում ենք իմանալ՝ պատասխան: Հարցը՝ որպես ճանաչողական ձև, միջոց է պարզելու անհայտը՝ հենվելով ինչ որ հայտնի փաստի վրա: Այս առումով բավականին մեծ է ուսուցչի դերը: Նրա խնդիրն է ճիշտ ձևակերպված հարցերի միջոցով նպաստել աշակերտների մտածողական զարգացմանը, և ստեղծել այնպիսի կրթական միջավայր, որտեղ սովորողը չի խուսափի սեփական տեսակետն արտահայտելուց, որը կարող է և չհամընկնել իր տեսակետի հետ:Այս դեպքում աշակերտի խնդիրն է փաստարկված դատողության միջոցով ապացուցել իր իրավացիությունը կամ, ընդունելով դիմացինի փաստարկները, փոփոխություններ կատարել իր դիրքորոշման մեջ: Գնահատելով տարբեր փաստեր և երևույթներ՝ աշակերտը քայլ առ քայլ սովորում է գնահատել իր իսկ գործունեությունը: Այս ամենի արդյունքում էլ հենց ձևավորվում է ավելի բարդ ճանաչողական հմտություններ՝ քննադատական մտածողություն:

Քննադատական մտածեղության բաղադրատարրերը համարվում են գլոբալ մտածողության բաղկացուցիչ և՝

- Կանխորոշում են ուսումնառության նպատակները,
- Հանգեցնում են կարծրատիպերի հաղթահարմանը,
- Նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը,
- Նպաստում են աշխարհի ճանաչմանը իր բոլոր կողմերով
- Ապահովվում են անձի բաց լինելը այլընտրանքի նկատմամբ
- Զարգացնում են պրոբլեմների լուծման ալտերնատիվ ուղիները տեսնելու կարողությունը:

Սուխոմլինսկին սովորողների մտածողության զարգացումը դպրոցական կրթության ամենասուր, ամենախնդրահարույց պրոբլեմներից մեկն է համարել:

Գիտեիքի և մտածողության միջև եղած կապը փորձում է բացահայտել Դայանա Հալպերնը: Մտածողությունն օգնում է մեզ կիրառել նախկինում ձեռք բերված գիտելիքները նորը կառուցելու համար: Մտածողության այդ տեսակին դիմում են խնդիրներ լուծելիս , եզրակացություն ձևակերպելիս : 'Քննադատական' բառը իր մեջ գնահատողական բաղադրիչ է պարունակում: Երբեմն այդ բառի ներքո ինչ որ բացասական երանգ է փոխանցվում: Բայց գնահատականը պիտի լինի կառուցողական՝ արտահայտելով և՝ դրական, և՝ բացասական վերաբերմունք:

Քննադատական մտածողությանը կոչում են նաև նպատակադրված մտածողություն , որովհետև այն ուղղված է ցանկալի արդյունքի ստացմանը: Նախևառաջ մեզ հետաքրքրում էր այն հարցը , թե հնարավոր է արդյոք դասավանդման միջոցով զարգացնել սովորողի մտածողության հտությունները առհաարակ , և ինչպիսին են այս ոլորտում առկա գիտական մոտեցումները:

Անցկացվել են մի շարք հետազոտություններ , որոնց արդյունքների ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել , որ ուսուցման շնորհիվ հնարավոր է զարգացնել քննադատական մտածողությունը, հատկապես այն դեպքում , երբ ուսումնառությունը միտված է այնպիսի հմտությունների և կարողությունների ձևավորմանը, որոնք կարելի է կիրառել տարբեր իրավիճաներում և տարբեր ոլորտներում: Արդյունքում աշակերտները սկսել են ավելի բարձր գնահատել իրենց մի շարք չափանիշներով , ինչպիսիք են՝ առանց ավելորդ շտապողականության դատողություններ անելով կարողանալ գնահատել հակադիր փաստարկները , բազմակողմանիորեն գնահատել ցանկացած խնդիր , հաշվի առնել անորոշության գործոնը, կարողանալ գնահատել ինֆորմացիայի աղբյուրի հուսալիությունը: Ցանկացած թեմայի վերաբերյալ գոյություն ունեն հակասական վկայություններ: Քննադատական մտածողություն կիրառելուլավագույն միջոցներից մեկը՝ թեմայի վերաբերյալ ամբողջ տեղեկատվության ուսումնասիրությունն է՝ փորձելով տարբերակել այն, ինչը վավեր է և ինչը՝ ոչ: Դա անելու համար պետք է իմանալ, թե այդ տաղեկատվությունը կարծիք է, թե ընդհակառակը՝ դրանք ապացուցելի փաստեր են կամ հիմնված են գիտական մեթոդների վրա:

Իր գրքում՝ 'Դարձեք քննադատորեն մտածող', Վենսան Ռուգիերոն նկարագրում է այն, ինչը նա անվանում է քննադատական մտածողի 'չորս հզորացնող կեցվածք': Դրանք են՝ խոնարհությունը, քննադատության համար բաց լինելը, ուրիշի հանդեպ հարգանքը և քրտնաջան աշխատելու պատրաստակամությունը: Անգամ լավագույն քննադատորեն մտածողը կարող է սխալ լինել իր

դատողություններում: Երբ աշակերտը կարծում է, որ ինքն արդեն գիտի ամեն ինչ թեմայի վերաբերյալ, նա այլևս բաց չէ նոր տեղեկատվության և քննադատության համար: Նա պետք է կարողանա ունկնդրել սեփական կարծիքի հակառակ կարծիքները: Սակայն դա չի նշանակում, որ պետք է ընդունել այն ամենը, ինչ ասում են ուրիշները: Պարզապես ամեն ոք պետք է կարողանա իր գաղափարները բացել ուրիշների հետադարձ կապի համար:

ՈՒսուցիչը կոնկրետ օրինակի միջոցով կարող է ցույց տալ աշակերտին փաստերի միջև եղած օրինաչափությունները, բացահայտել այս կամ այն երևույթը : Սակայն սովորողը կարող է առնչվել որևէ ինֆորմացիայի և ստիպված լինի ինքնուրույն պատասխաններ գտնել: Պետք է զարգացնել սովորողների ակտիվությունն ու հասցնել նրան , որ նա մշտապես զգա ավելի լայն փաստեր և երևույթներ իմաստավորելու պահանջ : Պրոբլեի լուծան նման մոտեցումը միաժամանակ ցույց է տալիս առհասարակ աշխարհայացքային այլ պրոբլեմների լուծման եղանակները: Արդյունքում սովորողի մեջ ձևավորվում է ընդհանուր մոտեցում վերլուծության նկատմամբ առհասարակ , որը հանգեցնում է սոցիալական երևույթների իմաստավորման և հասանելի որոշակի պրոբլեմների լուծման : Որպես քննադատական մտածողության դսևորումներ՝ մենք կարևորում ենք պատճառահետևանքային կապերի վերլուծությունը, փաստերն ու երևույթները գնահատելու կարողությունները: Սրանք համարվում են քննադատական մտածողության հայեցակարգերի կարևոր բաղկացուցիչներ:

Որպես ներգործության միջոց՝ նախընտրելի է կիրառել բաց հարցադրումների հետևյալ տեսակները՝

- ✓ Ինչու
- ✓ Ինչ հետևանքների է հանգեցնում
- ✓ Ինչպես եք գնահատում:

Քննադատական մտածողությունն արտահայտվում է այն հատկանիշների և կարողությունների տիրապետմամբ, որոնք պայմանավորում են անձի տրամաբանական մտածողություն, գնահատողական վերաբերմունք և ռեֆլեքսիայի բարձր մակարդակ: Դիպուկ է բնութագրված հետևյալ մտքում. ‘Քննադատական մտածողությունը մտածողություն է մտածողության մասին, երբ Դուք դատում եք՝ Ձեր մտածողությունը կատարելագործելու նպատակով’:

Քննադատական մտածողության հմտություններին լավ տիրապետելու համար և ուսուցիչը, և աշակերտը պետք է ունենան պոզիտիվ մտածողություն, դա նշանակում է ունենալ արժեքներ, իրենց առաջ դրված նպատակներ, և դրանց հասնելու կարողություններ:

Եզրակացություն

Ժամանակակից աշխարհում ինֆորմացիայի արագ ներհոսքի պայմաններում կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն ինֆորմացիային տիրապետելը , այլև արժևորելն ու համապատասխան իրավիճակներում կրառելը: Այս խնդիրն առկա է հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, երբ մարդիկ, առանց երևույթների պատճառների մեջ խորամուխ լինելու, չհիմնավորված եզրակացություններ են անում, տալիս են միակողմանի գնահատականներ, առանց վերլուծելու կրկնում են այլոց տեսակետներն ու կարծիքները: Մեր խնդիրն է առարկայի դասավանդման միջոցով աշակերտների մեջ ձևավորել քննադատական մտածողության որոշակի հմտություններ: Այդ նպատակով նախընտրելի է բաց հարցերի կիրառումը: Դրանք մեծացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ: Սովորողը փորձում է առաջադրված խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել: Բաց հարցերը դրդում են աշակերտին տրված թեմայի առավել կարևոր խնդիրներին վերաբերվող փաստերի վերլուծության, զուգահեռների որոնման, ենթադրությունների առաջադրման: Վերջապես քննադատական մտածողությունը աշակերտին օգնում է ցանկացած իրավիճակում անել հիմնավորված եզրակացություններ, կանխատեսել հնարավոր հետևանքները, իսկ գնահատելիս լինել շրջահայաց, փաստերն ու երևույթները դիտարկել տարբեր տեսանկյուններից, չշտապել դատողություններ անելիս:

Կարելի է հավաստել, որ քննադատական մտածողությունն անձի հոգեմտավոր կարողությունների զարգացման , ինքնակատարելագործման, մտագործունեության ակտիվացման կարևոր գործոն է և ժամանակակից աշխարհում կրթության գերակայություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Պատմության և հասարակագիտության ուսուցիչների հինգօրյա վերապատրաստումների պլան և նյութեր: 2007
2. Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան, Ս. Խաչատրյան, Ն. Բայաթյան: 'Համագործակցային ուսուցում' ձեռնարկ: Երևան 2006
3. Քննադատական մտածողություն ձևավորող կրթությունը որպես կանխակալ մտածողության արդյունքում ծագած հակասությունների կարգավորման գրավական: Արևիկ Անապիոսյան